# ՄԱՆԿԱԿԱՆ




# ՔԵՐԹՈՒԱԾՔ

20 կ.

Тифлисъ, Худож.-Лит. Р. Шахбазяна

Н. Мренъ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2.

891.99-93
Ե

# ԵՐԵՔ ԿԱՏՈՒԻ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա п/1601

*Հրատարակութիւն իշխ. Մ. Թումանեանի.*

ԹԻՖԼԻՍ

Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, Օրբ. փողոց տ. № 1—2.

1896.

Дозволено цензурою. Тифлисъ, 22-го февраля 1896 года.


Մայրը ընծայեց իր ձագուկներին երեք զոյգ գեղեցիկ ձեռնոցներ։

# ԵՐԵՔ ԿԱՏՈՒԻ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

—Այսօր ձեր ծննդեան օրն է, սիրելի երեխայք, ասաց կատուն իր երեք ձագուկներին։ Թէպէտ դուք ձեր մշտական չարութիւններով ինձ շատ վշտացնում էք, այնուամենայնիւ ես չեմ ուզում մի այսպիսի նշանաւոր օր ձեզ առանց ընծայի թողնել և յոյս ունեմ, որ այսօրուանից դուք կը խելօքանաք։ Այդ ասելով՝ նա տուեց իր ձագուկներին երեք զոյգ գեղեցիկ ձեռնոցներ։

—Դէ՜հ, գնացէ՛ք այժմ, խաղացէք, բայց զգոյշ եղէք, որ չը կորցնէք կամ չը կեղտոտացնէք ձեր ձեռնոցները, որովհե-

տեւ այս երեկոյ մենք հրաւիր-ուած ենք մանկական հանդէ-սին, որ սարքում է մեր հարե-ւանը և ես ուզում եմ, որ դուք հագնէք ձեր նոր ձեռնոցները։



Խեղճերը հեկեկալով վերադարձան տուն։

Ձագուկները խոստացան, որ խելօք կը լինեն և վազեցին պարտէզը, իսկ մայրը գնաց խոհանոց նրանց համար կար-կանդակ պատրաստելու։

Իրաւ, որ սկզբում ձագուկ-ները շատ խելօք էին պահում իրանց և կարգով գրօնում էին պարտիզում, բայց որով-հետև բնութիւնից նրանք առհասարակ ժիր էին, շուտով ձանձ-րացան և մոռանալով իրանց խոստումները, սկսեցին իրար յետևից ընկնել, թփերի մէջ թագչել, գլոր գլոր գալ, մին-չև որ բոլորովին ուժասպառ ընկան խոտի վրայ։

—Բայց ո՞րտեղ են իմ ձեռնոցները, ասաց ձագուկներից

մէկը, զարմանքով նայելով իր մերկ ձեռքերին։

—Իմ ձեռնոցներն էլ են անհետացել, ասաց միւսը։



Ձագուկներից մէկը վեր բարձրացաւ և վերցրեց ձեռնոցները։

—Իմն էլ..... աւելացրեց երրորդը և նրանք սարսափով նկատեցին, որ բոլորն էլ իրանց ձեռնոցները կորցրել են։ Խեղճերը հեկեկալով վերադարձան տուն և պատմեցին մօրը իրանց գլխի եկածը, բայց մայրը սաստիկ բարկացաւ և ուշադրութիւն չդարձնելով նրանց արտասուքի վրայ, մի մեծ փայտ վերցրեց ձեռքը և սպառնաց նրանց, որ եթէ իսկոյն չը գտնեն ձեռնոցները—խստիւ կը պատժուեն։

—Օ՜—օ՜, փայտի հարուածները արդէն յայտնի էին ձագուկներին. ճարները կտրած՝ նրանք գնացին որոնելու իրանց կորուստը, բայց այդ հեշտ չէր, որովհետև պարտէզը մեծ էր

և, ո՛վ գիտէ, ո՞րտեղ էին կորցրել։

Դէս ու դէն ընկան, ամբողջ պարտէզը երկու անգամ շըրջեցին, բայց ձեռնոցները չը կան ու չը կան.....



Նրանց ուրախութեանը չափ ու սահման չըկար։

Ամօթահար եղած նրանք արդէն տուն էին վերադառնում, երբ յանկարծ գլխները բարձրացնելով՝ ծառերից մէկի վրայ նկատեցին իրանց ձեռնոցները, որոնց, երևի, քամին էր գցել այնտեղ։

Իսկոյն ձագուկներից մէկը վեր բարձրացաւ և վերցրեց ձեռնոցները։ Նրանց ուրախութեան էլ չափ ու սահման չը կար, երբ վազեցին իրանց մօր մօտ, որ նրան ցոյց տան իրանց գիւտը։

—Շա՜տ բարի, շա՜տ բարի, ասաց մայրը։ Ես ուրախ եմ, որ դուք գտաք ձեր ձեռնոցները և չը սխալեցիք ինձ ձեզ



Մայրը նստեց մէջ տեղը և սկսեց կտրել կարկանդակը:

պատժելու, որ միշտ մեծ ցաւ է պատճառում ինձ:

—Դէ՛հ, գնանք այժմ ճաշ ուտելու, որ վաղուց պատրաստ է արդէն. այդքան վազվզելուց յետոյ դուք երևի քաղցած կը լինէք:

Այդ հրաւէրը շատ դուր եկաւ ձագուկներին և նրանք մլաւելով ներս մտան սեղանատունը, ուր փոքր սեղանի վրայ սարքած էր խուրաքանչիւրի ամանը: Մայրը նստեց մէջ տեղը և սկսեց կտրել կարկանդակը, իսկ ձագուկները անհամբեր սպասում էին իրանց բաժնին և հէնց որ ստացան նրան, էլ մոռացան ամենայն խոհեմութիւն: Նրանք ագահութեամբ վրայ ընկան կարկանդակի կտորներին և սկսեցին ձեռքերով ուտել՝ անհոգ մնալով, որ ձեռնոցները կը կեղտոտուեն:



Ձագուկները ստիպուած էին լուանալ չորացնել և ութօյել իրանց ձեռնոցները։

Մայրը որ տեսաւ այդ բանը, առաջուանից աւելի սաստիկ բարկացաւ. Նրան զզուելի էր տեսնել իր ձագուկների անմաքրասիրութիւնը, որովհետև կատուները առհասարակ շատ մաքրասէր են և նա վճռեց այս անգամ անպատճառ պատժել անհնազանդներին։ Ճաշից յետոյ մայրը մենակ գնաց հիւր, իսկ ձագուկները ընկերների հետ խաղալու ու զուարճանալու փոխարէն՝ ստիպուած էին լուանալ, չորացնել և ութօյել իրանց ձեռնոցները։ Ահա ինչպիսի տխուր կերպով վերջացրին մեր կատուի ձագուկները իրանց ծննդեան առաջին տարեդարձը։

A II/1601
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0029074

ЦЕНА
Л 1601